

## ՆՈՐ ԵՐԵՎԱՆ ԵՎԱԾ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՎ ԲԱՑԱՌԻԿ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՀԻՄՔԵՐԻ՝ ԴԱՏԱՎՃՈՌՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՉԼԻՆԵԼՈՒ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՔՐԵԱՎԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՍՊՐԲՈՒՄ ԵՎ ՆՈՐ ՕՐԵՆՍՊՐԲԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ

### Արմեն Հովհաննիսյան

*Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի  
իրավաբանության և միջազգային հարաբերությունների  
դեպարտամենտի իրավագիտության ամբիոնի ասպիրանտ*

Տեսությունում «հիմք» եզրույթը բնութագրվում է որպես որևէ բանի սկզբնաղբյուր, ակունք, ելակետ, որևէ բան հիմնավորելուն ծառայող փաստ կամ որևէ իրողություն, որի վրա հիմնված, հաստատված կամ ամրագրված է ինչ-որ բան<sup>1</sup>:

Այդ համատեքստում ուսումնասիրելով ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի (այսուհետ՝ Գործող օրենսդիրք) 426.3-րդ հոդվածի 1-ին մասը՝ կարող ենք փաստել, որ նոր երևան եկած հանգամանքներով բացառիկ վերանայման հիմքերը փաստեր, փաստական հանգամանքներ են, որոնք օժտված են մի շարք հատկանիշներով և օրինական ուժի մեջ մտած վերջնական ակտերի<sup>2</sup> վերանայման ելակետ են:

Ուսումնասիրությունը վկայում է, որ չորս խմբերի բաժանված համապատասխան փաստական հանգամանքները օրենսդիրք բնութագրել է հետևյալ հատկանիշներով.

1) ի տարբերություն առաջին երեք հիմքերի՝ չորրորդ խմբում տեղ գտած փաստական հանգամանքների համար չի պահանջվում ձևական ապացուցում, այսինքն՝ դրանց՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատում,

2) առաջին երեք խմբերում ամրագրված փաստական հանգամանքները պետք է հաստատված լինեն օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, սակայն Գործող օրենսգրքի 426.3-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերում նման դատական ակտ կայացնելու անհնարինության պարագայում այդ հանգամանքները ենթակա են պարզման օրենսգրքով նախատեսված կարգով կատարվող քննությամբ:

Այն, որ չորրորդ խմբում տեղ գտած հանգամանքների համար չի նախատեսվել ֆորմալ ապացուցման պահանջ, կարծում ենք՝ ուղղակիորեն պայմանավորված է այդ հանգամանքների բնությով:

Այսպես, մասնագիտական գրականության<sup>3</sup> ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Գործող օրենսգրքի 426.3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված «այլ հան-

<sup>1</sup> Տե՛ս **Աղայան Է. Բ.**, Արդի հայերենի բացատրական բառարան, 1976 թ., Երևան, էջ 871, **Даль В.**, Толковый словарь живого великорусского языка, М., 1998, էջ 1815:

<sup>2</sup> Նոր երևան եկած հանգամանքներով կարող են վերանայվել ոչ միայն գործն ըստ էության լուծող դատական ակտերը, այլև մինչդատական վարույթում կայացված վերջնական որոշումները (տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2011 թվականի փետրվարի 4-ի թիվ ՍԴՊ 935 որոշումը):

<sup>3</sup> Տե՛ս **Громов Н. А.**, Вновь открывшиеся обстоятельства в уголовном процессе, М., Спарк, 1999, էջ 115, **Тетерин Б. С.**, Возобновление дел по вновь открывшимся обстоятельствам, М., Госюриздат, 1959, էջ 30, **Басков В. И.**, Возобновление уголовных дел по вновь открывшимся обстоятельствам, Государство и право, 1981, № 12, էջ 132 և այլք:

զամանքները» մինչ դատական ակտի կայացումը օբյեկտիվ իրականությունում գոյություն ունեցած<sup>4</sup> և դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո երևան եկած հանգամանքներն են, որոնց թվին կարող են դասվել, մասնավորապես, սպանված համարվող տուժողի կենդանի լինելը, դատապարտյալի կողմից ավելի ծանր կամ մեկ այլ հանցագործություն կատարելը, որը առաջ է բերում դատավճռով հաստատված հանցագործության վերաորակման անհրաժեշտություն, դատապարտյալի մոտ այլուրեքության առկայությունը, հանրորեն վտանգավոր արարք կատարելու ժամանակ դատապարտյալի անմեղսունակ վիճակում լինելու փաստը, հանցագործության կատարմանը այլ անձանց մասնակցությունը կամ այդ հանցագործությունը այլ անձի կողմից կատարելը և մի շարք այլ հանգամանքներ<sup>5</sup>:

Ասվածը վկայում է, որ «այլ հանգամանքները» ունեն այնպիսի բնույթ, որ նույնիսկ դրանց ֆորմալ ապացուցման բացակայության պայմաններում կարող են օրինական ուժի մեջ մտած վերջնական իրավական ակտերի վերանայման հիմք հանդիսանալ<sup>6</sup>:

Այդ առումով նշենք, որ եթե քննարկվող հանգամանքների ֆորմալ ձևով ապացուցված չլինելը փաստացի չի կարող առաջացնել որևէ գործնական կամ իրավական խնդիր, ապա նույնը չի կարելի ասել նոր երևան եկած հանգամանքների մյուս հիմքերի համար:

Այստեղ նախևառաջ անհրաժեշտ է պարզել, թե ինչու է օրենսդիրը առաջին երեք խումբը կազմող նոր երևան եկած հանգամանքների համար նախատեսել դրանց՝ դատական ակտով հաստատված լինելու պահանջ:

Կարծում ենք, որ այդ պահանջը անմիջականորեն կապված է անմեղության կանխավարկածի սահմանադրական երաշխիքի հետ:

Անմեղության կանխավարկածը, լինելով հիմնարար իրավական սկզբունք, ամրագրված է ՀՀ Սահմանադրությունում<sup>7</sup>, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում<sup>8</sup>, ինչպես նաև մի շարք միջազգային փաստաթղթերում<sup>9</sup>, որոնցում տեղ գտած համապատաս-

<sup>4</sup> Դրա հետ կապված ցանկանում ենք նշել, որ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի (տե՛ս [http://parliament.am/draft\\_docs5/K-084lrlr.pdf](http://parliament.am/draft_docs5/K-084lrlr.pdf)) (այսուհետ՝ Նախագիծ) դեպքում, երբ «նոր և նոր երևան եկած հանգամանքներ» եզրույթները միասնականացվել և նախատեսվել են «նոր հանգամանքներ» եզրույթի ներքո, ստացվում է, որ Նախագծի 409-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում սահմանված «այլ հանգամանքները» կարող են լինել նաև մինչ դատական ակտի կայացումը օբյեկտիվ, իրականում գոյություն չունեցած, սակայն դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո հայտնի դարձած հանգամանքները (օրինակ՝ անձը դատապարտվում է դիտավորյալմբ մեկ այլ անձի առողջությանը ծանր վնաս պատճառելու համար. դատավճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո տուժողը մահանում է, իսկ դատաբժշկական փորձաքննության արդյունքները վկայում են, որ տուժողի մահը եղել է վերջինիս առողջությանը պատճառված ծանր վնասի ուղղակի հետևանք):

<sup>5</sup> Տե՛ս ՀՀ քրեական դատավարություն, Հատուկ մաս, դասագիրք բուհերի համար, Երևան, 2006 թ., էջ 418:

<sup>6</sup> Կարծում ենք, որ դա է նաև պատճառը, որ, ի տարբերություն Գործող օրենսգրքի, որը 426.5-426.6-րդ հոդվածներով սահմանված կարգով դատախազական քննության ընթացակարգ է նախատեսել նոր երևան եկած հանգամանքներով բացառիկ վերանայման բոլոր հիմքերի համար, Նախագիծը նախնական վարույթի հարուցում նախատեսել է բացառապես քննարկվող հիմքի համար (Նախագծի 411-412-րդ հոդվածներ):

<sup>7</sup> Տե՛ս ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածը:

<sup>8</sup> Տե՛ս Գործող օրենսգրքի 18-րդ հոդվածը, Նախագծի 17-րդ հոդվածը:

<sup>9</sup> Տե՛ս Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 6-րդ, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածների 2-րդ մասերը, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 11-րդ հոդվածի 1-ին մասը:

խան դրույթները ուղղակիորեն վկայում են, որ անձի մեղավորության վերաբերյալ ոչ մի հետևություն չունի որևէ իրավաբանական նշանակություն, քանի դեռ առկա չէ օրինական ուժի մեջ մտած դատավճիռ:

Կարծում ենք, որ նշված հանգամանքով էլ պայմանավորված Գործող օրենսգրքի 426.3-րդ, ինչպես նաև Նախագծի 409-րդ հոդվածի 1-ին մասի 1-ից 3-րդ կետերում սահմանվել է, որ համապատասխան փաստական հանգամանքները պետք է հաստատված լինեն օրինական ուժի մեջ մտած դատական ակտով:

Սակայն հարկ է նշել, որ այստեղ, մեր կարծիքով, հաշվի չի առնվել, որ «դատական ակտ» եզրույթը ունի լայն իմաստ ու ներառում է ոչ միայն դատարանի դատավճռի, այլև գործն ըստ էության լուծող այլ դատական ակտերի (օրինակ՝ քրեական գործով վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու մասին դատարանի որոշումներ), ինչպես նաև գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտերի (օրինակ՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու մասին դատարանի որոշումներ) կայացում<sup>10</sup>, իսկ այլ դատական ակտով, բացառությամբ դատավճռի, անձի մեղավորությունը չի կարող համարվել ապացուցված:

Այդ իսկ պատճառով կարծում ենք, որ թե՛ Գործող օրենսգրքի, թե՛ Նախագծի վերը նշված դրույթներում «դատական ակտ» բառակապակցության գործածումը ճիշտ չէ և շտկման կարիք ունի, քանզի այդ նորմերում ամրագրված փաստական հանգամանքները կարող են հաստատվել բացառապես դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռով:

Այժմ անդրադառնանք համապատասխան հանգամանքների ֆորմալ ապացուցման պարտադիր պահանջից օրենսդրի կողմից սահմանված բացառություններին:

Գործող օրենսգրքի 426.3-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված է. «Եթե վաղեմության ժամկետները լրանալու, համաներման ակտ ընդունվելու կամ առանձին անձանց ներում շնորհելու պատճառով, ինչպես նաև մեղադրյալի մահվան հետևանքով դատական ակտ կայացնելն անհնարին է, ապա սույն հոդվածի առաջին մասի 1-3-րդ կետերում մատնանշված նոր երևան եկած հանգամանքները պարզվում են սույն օրենսգրքով նախատեսված կարգով կատարվող քննությամբ»:

Կարծում ենք՝ օրենսգրքի նշված դրույթը պարունակում է որոշ անհասկանալի ձևակերպումներ, որոնք պարզաբանման կարիք ունեն:

Այսպես, նախևառաջ պարզ չէ, ավելի ճիշտ՝ ապակողմնորոշող է այն հանգամանքը, որ օրենսդիրը որպես դատավճիռ<sup>11</sup> կայացնելու անհնարինության դեպք է նախատեսել նաև առանձին անձանց ներում շնորհելը:

ՀՀ քրեական օրենսգրքի 83-րդ հոդվածը, ինչպես նաև ՀՀ Նախագահի՝ 2003 թվականի նոյեմբերի 19-ի ՆՀ-183-Ն հրամանագրի դրույթները վկայում են, որ ներումը, լինելով կոնկրետ դեպքում իրավունքի կիրառման անհատական ակտ, կարող է կիրառվել բացառապես այն անձի նկատմամբ, ով դատապարտվել է օրինական ուժի մեջ մտած դատավճռով, ինչն էլ նաև ներման և համաներման միջև առկա հիմնական տարբերու-

<sup>10</sup>Այդ մասին է վկայում նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասը:

<sup>11</sup>Ինչպես արդեն նշել ենք, անձի մեղավորությունը կարող է ապացուցված համարվել միայն օրինական ուժի մեջ մտած դատավճռով, և ոչ թե նաև այլ դատական ակտով, ինչը փաստացի սահմանվել է նաև օրենսգրքի 426.3-րդ հոդվածի 3-րդ մասում:

յունեներից մեկն է<sup>12</sup>:

Ասվածից հետևում է, որ ներում շնորհելու պատճառով չի կարող անհնարին լինել դատարանի կողմից դատավճռի կայացումը:

Բացի դրանից, կարծում ենք՝ իրավաչափ չէ նաև օրենսգրքի 426.3-րդ հոդվածի քննարկվող մասում նախատեսված այն դրույթը, ըստ որի՝ համապատասխան փաստական հանգամանքների՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված լինելու անհնարինության դեպք նախատեսվել է նաև մեղադրյալի մահվան հետևանքը, քանի որ այն, ըստ էության, հակասում է օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետին:

Այսպես, վերը նշված կետի ուսումնասիրությունից հետևում է, որ անձի մահվան հիմքով քրեական գործով վարույթը չի կարճվում այն դեպքում, երբ գործի վարույթն անհրաժեշտ է ուրիշ անձանց նկատմամբ նոր ի հայտ եկած հանգամանքների կապակցությամբ գործը վերսկսելու համար, ինչը, չնայած օրենսգրքում համապատասխան կարգավորման բացակայության, ենթադրում է նաև, որ այդ դեպքում գործով վարույթը շարունակվում է, և կայացվում է դատավճիռ, իսկ եթե դատավճիռը լինում է մեղադրական, ապա պատիժ չի նշանակվում<sup>13</sup>:

Այսինքն՝ ստացվում է, որ նշյալ կետում սահմանված բացառության պարագայում չի կարող անհնարին լինել օրենսգրքի 426.3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ից 3-րդ կետերում ամրագրված փաստական հանգամանքների՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատումը:

Վերոգրյալի հիման վրա կարելի է եզրակացնել, որ օրենսգրքի 426.3-րդ հոդվածի 3-րդ մասում որպես դատավճռի կայացման անհնարինության դեպքեր՝ նաև ներման և մեղադրյալի մահվան հետևանքների սահմանումը, մեր կարծիքով, ի սկզբանե հիմնավոր չէ:

Օրենսգրքի քննարկվող դրույթի մեկնաբանությունից հետևում է նաև, որ այն դեպքերում, երբ Գործող օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 13-րդ կետերի հիմքով քրեական գործով վարույթը կարճվում է (հարուցումը՝ մերժվում, քրեական հետապնդումը՝ դադարեցվում), ուստիև անհնարին է դառնում առաջին երեք խմբերում ամրագրված փաստական հանգամանքների՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատումը, դրանք պարզվում են օրենսգրքի 426.5-րդ կամ 426.8-րդ հոդվածներով<sup>14</sup> նախատեսված վարույթ հարուցելու միջոցով:

Ասվածը վկայում է, որ նոր երևան եկած հանգամանքներով վարույթ կարող է հարուցվել, և դրա արդյունքում այլ անձանց նկատմամբ կայացված վերջնական իրավա-

<sup>12</sup>Այդ մասին մանրամասն տես **Առաքելյան Ս. Վ., Գաբուզյան Ա. Գ., Խաչիկյան Դ. Մ., Ղազինյան Գ. Ս., Մաղաքյան Ն. Ս.**, Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք, ընդհանուր մաս (4-րդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով), Երևան, ԵՊՀ հրատարակչ., 2009 թ., էջեր 508-509:

<sup>13</sup>Ընդ որում, նշենք, որ քրեական գործով վարույթի կարճման արգելք հանդիսացող այս դեպքը նախատեսված է նաև Նախագծի 12-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում, և այնտեղ նույնպես պարզաբանված չեն վարույթը շարունակվելու պարագայում առաջացող հարցերը:

<sup>14</sup>Թեև օրենսգրքի 426.3-րդ, 426.5-րդ և 426.8-րդ հոդվածների համակարգային վերլուծությունից հետևում է, որ համապատասխան դեպքերում այդ հանգամանքները ենթակա են պարզման ինչպես դատախազական քննությամբ, այնպես էլ անմիջականորեն դատական քննությամբ, սակայն վերջինը գործնականում անհնար է թվում, քանի որ այն պահանջում է որոշակի փաստերի հաստատում և արձանագրում՝ պաշտոնական քննությամբ, իսկ նոր երևան եկած հանգամանքներով պաշտոնական քննություն իրականացնելու լիազորությամբ օրենսդիրը օժտել է բացառապես դատախազին կամ նրա հանձնարարությամբ՝ քննիչին (այդ մասին տես «Դատավորի ձեռնարկ, գիտագործնական վերլուծություն», Երևան, 2010 թ., էջեր 363-364):

կան ակտը կարող է վերանայվել նույնիսկ այն դեպքերում, երբ վերը նշված հիմքերով քրեական գործով վարույթը կարճված է, և օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռով ապացուցված չէ անձի մեղավորությունը Գործող օրենսգրքի 426.3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ից 3-րդ կետերով նախատեսված ենթադրյալ հանցավոր արարք գործելու մեջ:

Փաստորեն օրենսդիրը անձի մեղավորությունը ապացուցված է համարում նաև համապատասխան հիմքերով քրեական գործով վարույթի հարուցումը մերժելու, վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումներում նրա մեղավորության մասին վկայող ենթադրյալ հիմքերի առկայության պարագայում, ինչը, մեր կարծիքով, հակասում է անմեղության կանխավարկածին:

Նմանատիպ դեպքերում անմեղության կանխավարկածի էությունն աղավաղվելու մասին է վկայում նաև Սարգու իրավունքների եվրոպական դատարանի՝ Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի վճռում արտահայտված հետևյալ դիրքորոշումը. «Անմեղության կանխավարկածը կխախտվի, եթե քրեական իրավախախտման մեջ մեղադրվող անձի վերաբերյալ հանրային պաշտոնատար անձի հայտարարությունում արտացոլվի կարծիք առ այն, որ նա մեղավոր է նախքան դրա՝ օրենքի համաձայն ապացուցված լինելուն: Նույնիսկ որևիցե պաշտոնական եզրակացության բացակայության պայմաններում դա բավարար պատճառ կարող է հանդիսանալ կարծելու, որ պաշտոնատար անձը մեղադրյալին համարում է մեղավոր: Ավելին, անմեղության կանխավարկածի սկզբունքը կարող է խախտվել ոչ միայն դատավորի կամ դատարանի կողմից, այլ նաև այլ հանրային պաշտոնատար անձանց, այդ թվում՝ դատախազների կողմից: Հայտարարությունն այն մասին, որ անձին պարզապես կասկածում են հանցագործություն կատարելու մեջ, պետք է հստակորեն տարբերակվի անձի՝ վերջնական դատապարտման բացակայության պայմաններում արված այն բացահայտ հայտարարությունից, որ նա կատարել է տվյալ հանցագործությունը: Վերջինի դեպքում անմեղության կանխավարկածը խախտվում է, մինչդեռ առաջին տեսակի հայտարարությունը՝ դատարանի կողմից քննված զանազան իրավիճակներում համարվել է անառարկելի»<sup>15</sup>:

Ներկայացված շարադրանքի համատեքստում անընդունելի է թվում ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած այն դիրքորոշումը, ըստ որի՝ Գործող օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-13-րդ կետերում ամրագրված ոչ արդարացնող<sup>16</sup> հիմքերով քրեական գործով վարույթի կարճման ժամանակ մեղադրյալի կողմից հանցանքի կատարումը, որպես կանոն, մինչդատական կամ դատական վարույթներում ապացուցված է<sup>17</sup>:

Կարծում ենք, որ ոչ ռեաբիլիտացիոն հիմքերով վարույթի կարճման դեպքում անձի կողմից ենթադրյալ հանցանքի կատարումը չի կարող համարվել ապացուցված, քանի որ հակառակ պարագայում այն կհանգեցնի ոչ միայն անմեղության կանխավարկածի խեղաթյուրման, այլև քրեական հետապնդման մարմնի կողմից արդարադատության իրականացման այն դեպքերում, երբ վարույթը կարճվում է մինչդատական փուլում, ուստի, մեր կարծիքով, նման դեպքերում ոչ թե ապացուցված է համարվում անձի կողմից

<sup>15</sup>Տե՛ս Սարգու իրավունքների եվրոպական դատարանի՝ Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի գործով 2012 թվականի հոկտեմբերի 2-ի վճիռը, կետեր 185-186:

<sup>16</sup> Կարծում ենք, որ քրեական գործով վարույթի կարճման հիմքերը՝ «արդարացնող» և «ոչ արդարացնող» եզրույթների ներքո դասակարգումը այնքան էլ ճիշտ չէ, քանի որ անձը կարող է համարվել արդարացված բացառապես դատարանի կողմից, իսկ, ինչպես հայտնի է, քրեական գործով վարույթը կարճվում է նաև մինչդատական փուլում:

<sup>17</sup>Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի մարտի 30-ի թիվ ՍԴՌ-871 որոշումը, կետ 6:

ենթադրյալ հանցավոր արարքի կատարումը, այլ նրա մեղավորության հարցը մնում է չլուծված:

Վերոգրյալ դատողությունների լույսի ներքո նաև հարց կարող է ծագել, թե արդյոք ոչ միայն օրենսգրքի 426.3-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգավորումը, այլև ոչ ռեաբիլիտացիոն հիմքերով վարույթի կարճման որոշումները ինքնին չեն հակասում անմեղության կանխավարկածին:

Կարծում ենք, որ այդ հարցին հիմնավոր պատասխան է տրվում տեսությունում, երբ նշվում է, որ համապատասխան հիմքերով վարույթի կարճումը չի հակասում անմեղության կանխավարկածին, եթե մեղադրյալը հնարավորություն ունի բողոքարկելու կարճման մասին որոշումը, մեղադրյալն իրավունք ունի առարկելու կարճման որոշման դեմ և պահանջելու, որ դատավարությունը շարունակվի ընդհանուր հիմունքներով<sup>18</sup>:

Այսպիսով, վերոշարադրյալը հիմք է տալիս հաստատելու այն փաստը, որ Գործող օրենսգրքի 426.3-րդ հոդվածի 3-րդ մասը ուղղակիորեն հակասում է հիմնարար դրույթ հանդիսացող անմեղության կանխավարկածին:

Այդ համատեքստում անհրաժեշտ ենք համարում նշել, որ ի տարբերություն Գործող օրենսգրքի՝ Նախագծում այլևս չեն նախատեսվել քննարկվող խնդրի հետ առնչվող դրույթները, սակայն այդ պարագայում, մեր կարծիքով, ի հայտ է գալիս մեկ այլ, ոչ երկրորդական նշանակություն ունեցող հիմնարար իրավական խնդիր:

Այսպես, փաստացի ստացվում է, որ վաղեմության ժամկետները անցնելու կամ համաներման ակտ ընդունվելու հետևանքով քրեական գործով վարույթը կարճվելու պարագայում անձը զրկվում է նոր երևան եկած հանգամանքների առաջին երեք հիմքերով վերջնական իրավական ակտի վերանայման հնարավորությունից, ինչն արդեն իսկ չի կարող համատեղելի լինել դատական պաշտպանության, արդար դատաքննության, այդ թվում՝ արդարադատության մատչելիության սահմանադրաիրավական իրավունքներին:

Դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները, լինելով մարդու և քաղաքացու անօտարելի իրավունքներ, նրա մյուս իրավունքները ու ազատություններն ապահովող երաշխիք, էական տեղ են զբաղեցնում մարդու իրավունքների շարքում, որոնց գոյության գլխավոր նախապայմանն ամենից առաջ պետության՝ յուրաքանչյուր խախտված իրավունք որոշակի ընթացակարգի միջոցով վերականգնելու պարտականությունն է: Եթե բացակայում է իրավունքների պաշտպանության և վերականգնման արդյունավետ ընթացակարգը, ապա օրենսդրությամբ ամրագրված ցանկացած այլ իրավունք ընդամենը հռչակագրային դրույթ է<sup>19</sup>:

Դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների սահմանադրաիրավական բովանդակության վերաբերյալ մի շարք իրավական դիրքորոշումներ են արտահայտվել նաև ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներում<sup>20</sup>:

Մասնավորապես, ՀՀ սահմանադրական դատարանը նշել է. «Անձի իրավունքների ապահովման ու պաշտպանության տեսանկյունից Սահմանադրության 18-րդ հոդվածի նպատակն իրավունքների խախտումների մասին անձի պնդումների դատական քննության և այդպիսի խախտումների հետևանքները վերացնելու իրավունքի երաշխավորումն է:

<sup>18</sup> Տե՛ս ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ, 2010 թ., էջեր 256-257:

<sup>19</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 208:

<sup>20</sup> Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2006 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ՍԴՈ-652 (կետ 6), 2006 թվականի նոյեմբերի 16-ի թիվ ՍԴՈ-665 (կետ 5), 2007 թվականի հունվարի 16-ի թիվ ՍԴՈ-673 (կետեր 8-9), 2007 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՍԴՈ-719 (կետ 6), 2011 թվականի փետրվարի 4-ի թիվ ՍԴՈ-935 (կետ 6), 2012 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ ՍԴՈ-1051 (կետ 8), 2012 թվականի հունիսի 18-ի թիվ ՍԴՈ-1037 (կետ 6) և մի շարք այլ որոշումները:

Այդ իրավունքը սահմանափակման ենթակա չէ, և արդար դատավարության իրավունքը ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնական հատկանիշներից մեկն է»<sup>21</sup>:

Վերոգրյալի հիման վրա կարող ենք եզրակացնել, որ քննարկվող խնդրի շրջանակներում առաջանում է անմեղության կանխավարկածի և դատական պաշտպանության (արդար դատաքննության) հիմնարար դրույթների հավասարակշռության ապահովման անհրաժեշտություն:

Ընդ որում, պետք է նշել, որ նման խնդիր կարող է առաջանալ Գործող օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի ոչ միայն 6-րդ և 13-րդ, այլ նաև 9-րդ կետի հիմքով քրեական գործով վարույթի կարճման կամ Նախագծի 12-րդ հոդվածի 1-ին մասի ինչպես 5-րդ և 11-րդ, այնպես էլ 6-րդ կետի հիմքով քրեական հետապնդման դադարեցման պարագայում:

Այսպես, հնարավոր է, որ, օրինակ, 16 տարին չլրացած վկայի սուտ ցուցմունքը անմիջական ազդեցություն ունեցած լինի կայացված վերջնական իրավական ակտի օրինականության կամ հիմնավորվածության վրա, սակայն քրեական պատասխանատվության ենթարկվելու համար համապատասխան տարիքի հասած չլինելու հիմքի հիման վրա նրա նկատմամբ քրեական հետապնդման դադարեցումը անհնարին դարձնի այդ հանգամանքի՝ դատավճռով ապացուցումը:

Այսինքն՝ նմանատիպ դեպքերում նույնպես անձը զրկվում է դատական պաշտպանության և արդար դատաքննության սահմանադրաիրավական իրավունքներից օգտվելու իրավական հնարավորությունից:

Յիմք ընդունելով վերոշարադրյալը և հաշվի առնելով ներկայացված խնդիրների՝ թե՛ Գործող օրենսգրքում, թե՛ Նախագծում համակարգային լուծման անհրաժեշտությունը՝ առաջարկում ենք.

1. ուժը կորցրած ճանաչել Գործող օրենսգրքի 426.3-րդ հոդվածի 3-րդ մասը, 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետից հանել «կամ ուրիշ անձանց նկատմամբ նոր ի հայտ եկած հանգամանքների կապակցությամբ գործը վերսկսելու համար» հատվածը, 35-րդ հոդվածը լրացնել նոր 7-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ. «Սույն հոդվածի առաջին մասի 6-րդ, 9-րդ, 10-րդ և 13-րդ կետերում նշված հիմքերով քրեական գործի հարուցման մեղժում, վարույթի կարճում և քրեական հետապնդման դադարեցում չեն թույլատրվում, եթե դա անհրաժեշտ է այլ անձի նկատմամբ սույն օրենսգրքի 426.3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ից 3-րդ կետերով նախատեսված հիմքերով վարույթ հարուցելու համար: Սույն դեպքերում քրեական գործով վարույթը շարունակվում է ընդհանուր կարգով, սակայն մեղադրական դատավճիռ կայացվելու դեպքում պատիժ չի նշանակվում»,

2. Նախագծի 12-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետից հանել «կամ այլ անձանց նկատմամբ նոր հանգամանքների հիմքով վարույթը վերսկսելու համար» բառերը, 4-րդ մասից հանել երկրորդ նախադասությունը և նույն հոդվածը լրացնել նոր 5-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ. «Սույն հոդվածի առաջին մասի 5-րդ, 6-րդ, 8-րդ և 11-րդ կետերում նշված հիմքերով քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե դա անհրաժեշտ է այլ անձի նկատմամբ սույն օրենսգրքի 409-րդ հոդվածի 1-ին մասի 1-ից 3-րդ կետերով նախատեսված հիմքերով վարույթ հարուցելու համար: Այս, ինչպես նաև սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերում վարույթը շարունակվում է ընդհանուր կարգով, սակայն մեղադրական վերոհիկտ կայացվելու դեպքում պատիժ չի նշանակվում»:

<sup>21</sup> Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2011 թվականի ապրիլի 12-ի թիվ ՍԴՈ-954 որոշումը (կետ 7):

## THE PROBLEMS OF THE GROUNDS OF THE EXCEPTIONAL REVISION DUE TO NEWLY FOUNDED CIRCUMSTANCES NOT CONFIRMED BY A JUDGEMENT IN THE CURRENT CODE OF CRIMINAL PROCEDURE OF THE RA AND THE DRAFT OF THE NEW CODE

**Armen Hovhannisyan**

*postgraduate of the chair of jurisprudence  
of the department of law and international  
relations of European educational regional academy*

---

The present article in the light of comparative legal analysis of the current code of criminal procedure of the RA and the draft of the new code presents some problems connected with the grounds of the exceptional revision due to newly founded circumstances. In particular, the author discusses issues such as why the first three bases of newly founded facts must be proven by a court judgement, refers to the exceptions from that requirement defined in the Current code. The author states that those exceptions are contrary to the principle of presumption of innocence.

In the conclusion on the bases of the study the author proposes several solutions to the revealed problems.

## ПРОБЛЕМЫ ОСНОВАНИЯ ИСКЛЮЧИТЕЛЬНОГО ПЕРЕСМОТРА ПО ВНОВЬ ОТКРЫВШИМСЯ ОБСТОЯТЕЛЬСТВОМ, НЕУСТАНОВЛЕННЫМ ПРИГОВОРОМ В ДЕЙСТВУЮЩЕМ УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНОМ КОДЕКСЕ РА И В ПРОЕКТЕ НОВОГО КОДЕКСА

**Армен Оганесян**

*аспирант кафедры юриспруденции отдела права и  
международных отношений Европейской  
образовательной региональной академии*

---

В настоящей статье в свете сравнительно-правового анализа действующего Уголовно-процессуального кодекса и Проекта нового кодекса представляются некоторые проблемы, связанные с основанием исключительного пересмотра по



вновь открывшимся обстоятельствам.

В частности, автор обсуждает первые три основания вновь открывшихся обстоятельств, которые должны быть доказаны приговором суда, рассматривает исключения из этого требования, закрепленного в Действующем кодексе. Автором делается вывод о том, что эти исключения противоречат принципу презумпции невиновности.

В заключении на основе проведенного исследования автор предлагает несколько решений выявленной проблемы.

**Քանաչի քաներ** – նոր երևան եկած հանգամանքներ, անմեղության կանխավարկած, արդար դատաքննության և դատական պաշտպանության իրավունքներ

**Keywords:** newly discovered facts, presumption of innocence, rights to a fair trial and judicial protection

**Ключевые слова:** вновь открывшиеся обстоятельства, презумпция невиновности, права на справедливое судебное разбирательство и судебную защиту